ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ Վ.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.173 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մերձավանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Քրիստինե Տիգրանի Սուքիասյան

« Գրողի կենսագրության ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ»

Հետազոտական աշխատանք

ԵՐԵՎԱՆ2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 2

Գրողի կենսագրության ուսուցման հնարներ ---------- 3-13

Պարույր Սևակի կենսագրության ուսուցում ---------- 14- 17

Եզրակացություն ---------- 18

Օգտագործված գրականության ցանկ ---------- 19

Ներածություն

Գեղարվեստական ստեղծագործության հեղինակի կենսագրությունը ընթերցողին հետաքրքրում է նրա ստեղծագործություններին ծանոթանալուց հետո: Ուսուցման գործընթացում այս իրողությունը նույնպես պահպանվում է. տարրական դասարաններում աշակերտները պարզապես ընթերցում են բնագրեր, կատարում եզրակացություններ, համեմատություններ և այլն: Միջին դպրոցում արդեն աշակերտները գեղարվեստական երկը յուրացնում են հակառակ ուղղությամբ. ծանոթանում են հեղինակի կենսագրությանը, ստեղծագործության ընդհանուր բնութագրին, ապա կարդում են երկերը: «Կենսագրական տեղեկություն» բովանդակությամբ դասի նախընտրելի տիպը հաղորդումն է, այս դեպքում ուսուցիչը ներկայացնում է գրողի կյանքն ու գործունեությունը՝ հաստատելով այն խոսքը, որ «Գրողները մեր մշակույթի ծաղկունքն են, մեր ազգային հպարտությունը, նրանք բոլորն էլ, ամեն մեկը յուրովի, սիրել են մեր հայրենիքը և աջակցել նրա զարգացմանն ու բարգավաճմանը»:

Գրողի կենսագրության ուսուցման հնարներ

Գրողի մասին աշակերտի պատկերացումը նախապես սկսվում է նրա անձի ճանաչելուց: Դպրոցում դա կարող է լավագույնս արտահայտվել ծրագրային հեղինակների կենսագրությունների ուսուցմամբ: Երբեմն գրողի կենսագրությանը վերաբերող ինչ-ինչ բանավոր զրույցներն ավելի շուտ են հասնում աշակերտին, քան նրա կյանքի ու գործունեության լուրջ ճանաչողությունը: Այդպես դեռևս Եղիշե Չարենցի, Հովհաննես Շիրազի մասին պատկերացում չունեցող երեխան երբեմն տանը կամ փողոցում նրանց կյանքի մասին լսում է առասպելական պատմություններ և մի առանձնահատուկ վերաբերմունք տածում նրանց հանդեպ: Ուստի, դպրոցներում այդ գրողների կենսագրությունն անցնելիս չպետք է աշակերտին հիասթափեցնել սոսկ մի քանի չոր ու ցամաք փաստեր նրան հաղորդելով: Եվ ոչ միայն այդ գրողների կենսագրությունը…

Ուշագրավ մանրամասները կենդանացնում են գրողի նկարագիրը, իսկ ավելորդությունները՝ անհարկի ծանրաբեռնում:

Գրողի կենսագրության ուսուցումը համատեղում է մի քանի կողմեր՝

ա) կենսագրական փաստեր,

բ) գրողը որպես իր ժողովրդի պատմականորեն ձևավորված հոգեբանական կերտվածքի խտացում և արտահայտություն ,

գ)մարդկային նկարագիր,խառնվածք,հոգեբանություն,ինչը նախապատրաստում է նրան բնորոշ որոշակի հերոսի առկայությունը՝ որպես քնարական հերոս կամ գործող անձ:

Գրեթե բոլոր հայ գրողների կյանքն արժանի է ուշադիր և համակողմանի ուսումնասիրության, որովհետև նրանց բնութագրական անսահման հայրենասիրությունը սխրանքի հասնող անձնազոհությունը, հերոսականությունը, ազատագրական պայքարի ոգի, մարդկային առաքինի նկարագիրը, հալածանքներին դիմագրավելու անկոտրում կամքը: Ժամանակի ընթացքում հայ գրողը սրբացվել ու դարձել է իր հայրենիքի հավաստի խորհրդանշանը, այնպես, ինչպես Արարատ սարը,ինչպես պատմական Հայաստանի քարտեզը ,Գառնին ու Զվարթնոցը: Կարծես հայ գրողի համար ասված լինի<<Իմ հայրենիք՝ իմ ճակատագիր>>խոսքը, որովհետև ինչպիսին եղել է հայրենիքի պատմությունը, այնպիսին էլ հայ գրողի կենսագրությունը:

Հայ գրողի կենսագրությունը հայ ժողովրդի պատմության արտացոլումն է նաև մեկ այլ տեսանկյունից: Իրադարձությունների բերումով հայոց պետական ընդհատվել է V

դարում, ապա IX–XIV դարերում հատվածաբար վերականգնվել Վասպուրականում, Անիում, Կիլիկիայում: Այդ հետագա դարերում տեղի են ունեցել մեծ տեղաշարժեր: Միջնադարում լայն չափերի հասավ արտագաղթը: 1915 թ. եղեռնից հետո բռնագաղթի հետևանքով ավելի տարանջատված ու մարդաշատ դարձավ հայկական սփյուռքը: տպագրվել առաջին հայերեն գիրքը, թե ինչո՞ւ է 1794 թվականին Մադրասում լույս տեսել հայոց առաջին «Ազդարար» պարբերականը, թե ինչո՞ւ էին հայագիտական կենտրոններ և ուսումնական հաստատություններ ստեղծվում ոչ թե Հայաստանում, այլ՝ Վենետիկի սուրբ Ղազար կղզում (Մխիթարյան միաբանություն), Մոսկվայում (Լազարյան ճեմարան), Թիֆլիսում (Ներսիսյան դպրոց), Կալկաթայում (Մարդասիրական ճեմարան) և այլն: Դա նաև կպատասխանի այն հարցին, թե ինչու XIX դարում և XX դարի սկզբին ոչ թե Հայաստանն էր հայ գրականության ու մշակույթի կենտրոնը, այլ՝ Թիֆլիսը, Կ. Պոլիսը, Մոսկվան: Այսպես ավելի դյուրին կլինի բացատրել, թե ինչո՞ւ է այդ քաղաքներում անցել հայ գրողների կյանքն ու գործունեությունը, թե ինչո՞ւ են նրանց աճյուններն հանգչում օտարության մեջ՝ Դուրյանը, Պարոնյանը, Մեծարենցը՝ Կ. Պոլսում, Սունդուկյանը, Րաֆֆին, Թումանյանը և ուրիշներ՝ Թիֆլիսում, Մխիթար Սեբաստացին, Արսեն Բագրատունին և Ղևոնդ Ալիշանը՝ Վենետիկի սուրբ Ղազարում, Նալբանդյանը՝ Նոր Նախիջևանում: Հայ ժողովրդի պատմական ճակատագրով պետք է բացատրել նաև հայ գրականության մեկ այլ առանձնահատկություն: Այն, որ, միջնադարից սկսած, հայ հեղինակներից ոմանք հայերենի հետ մեկտեղ ստեղծագործել են նաև այլ լեզուներով: Իր ստեղծագործության զգալի մասով օտարագիր է միջնադարի մեր մեծ քնարերգու Սայաթ–Նովան, որը հայերեն ավելի քիչ է գրել, քան՝ վրացերեն ու ադրբեջաներեն: Հայ մեծանուն երգիծաբան Հակոբ Պարոնյանը հեղինակ է նաև թուրքատառ հայերեն ու թուրքերեն գրած երկերի: Այս երևույթն ավելի խորացավ XX դարում: Հատկապես արևմտահայության զանգվածային տեղահանությունից հետո, կորցնելով հայրենի երկիրը, ժամանակի ընթացքում հայորդիներից ոմանք կորցրին նաև մայրենի լեզուն: Անգլերեն սկսեցին ստեղծագործել Վիլյամ Սարոյանը, Մայքլ Արլենը (Տիգրան Գույումճյան), Մայքլ Արլեն Կրտսերը և շատ ուրիշներ, ֆրանսերեն՝ Անրի Թրուայան (Լևոն Թորոսյան), Արթուր Ադամովը, Վահե Քաչան (Խաչատրյան), Ռուբեն Մելիքը (Մելիք Մինասյան), հայերենից անգլերենի անցավ Լևոն-Զավեն Սյուրմելյանը, ֆրանսերենի՝ Շահան Շահնուրը և հանդես եկավ Արմեն Լյուբեն անվամբ: Հայ գրողներն ստեղծագործել են նաև ռուսերեն, իտալերեն, իսպաներեն, բուլղարերեն և այլ լեզուներով:

Օտարագիր լինելով հանդերձ՝ նրանք նվիրումով շարունակում են հայ գրականության ուղենշային ավանդույթները: Եվ պատահական չէ, որ մեկը մյուսի ետևից նրանք այսպիսի խոստովանություններ են արել: Վիլյամ Սարոյան «Թե անգիլերեն կը գրեմ ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկարեմ հայ գրող մը: Գործածած բառերն անգլիերին են: Միջավայրը, որու մասին կը գրեմ, ամերիկյան է Ոգին, որ կստիպե ինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ: Խորապես կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը»: Լևոն-Զավեն Սյուրմելյան, «Չկա մեկը, որ հայ լեզուն սիրե ինձմե ավելի խորապես: Բայց ես կը հավատամ աշխատանքի բաժանումին: Եվ կրնամ որպես ամերիկյան գրող ավելի մեծ չափով ծառայել իմ ժողովրդիս ու անգլերեն գրելով չեմ դադարի հայ գրող մը ըլլալե»: Այսպիսի խոստովանություններ քիչ այլ ձևակերպումներով արել են նաև մյուսները: Ուստի՝ թե՛ Սայաթ–Նովա, թե Պարոնյան և թե՛ Վիլյամ Սարոյան անցնելիս ուսուցիչը պարտավոր է անհրաժեշտ բացատրություն տալ պատմական այն ճակատագրի մասին, որը հայ գրողին դրդել է ստեղծագործել ոչ իր մայրենի լեզվով: Այս դեպքում առաջնային է դառնում ոգու հաղորդակցումը, ազգային բնավորության պահպանումը և ազգային ավանդույթը, որն արյան հետ փոխանցվում է ժառանգաբար: Ահա այսպես գրողի կենսագրության ուսուցումն ուսուցիչն առաջին հերթին պետք է պայմանավորի սեփական ժողովրդի պատմությամբ, սեփական ժողովրդի պատմական բախտով ու ճակատագրով: Դա կօգնի ճիշտ հասկանալ նրանց ստեղծագործության ազգային և պատմական առանձնահատկությունները:

Գրողի կենսագրության ուսուցման հաջորդ կարևոր կողմն այն է, որ կենսագրությունը դառնա հեղինակի ստեղծագործական յուրահատկությունների բացահայտման նախադրյալ: Այս դեպքում կարևոր է գիտակցել, որ գրողի խառնվածքն ու նկարագիրն այս կամ այն կերպ անպայմանորեն առկա է նրա վիպական կամ քնարական երկերում: Չափածո խոսքում քնարական հերոս ըմռնումը շատ հաճախ զուգադիպում է հեղինակային ես-ին, բայց և ձեռք բերում ավելի ընդհանրացնող ու ընդգրկուն նշանակություն: Դա հատկապես այդպես է ենթակայական շնչի այնպիսի քնարերգուների երկերում, ինչպիսիք են Պետրոս Դուրյանը, Միսաք Մեծարենցը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը և ուրիշներ: Ի վերջո, նրանք իրենց կյանքն են պատմում՝ խոսում իրենց սիրուց, իրենց ապրումներից, արտահայտում իրենց տրամադրությունները, վերաբերմունքներն ու գնահատականները:

Գրեթե բոլոր քնարական բանաստեղծների համար բնութագրական կարող են լինել մահից

առաջ՝ 1925 թվականի հոկտեմբերին Սերգեյ Եսենին գրած «Իմ մասին» ինքնակենսագրության այս տողերը. «Ինչ վերաբերում է մնացած ինքնակենսագրական տվյալներին դրանք իմ բանաստեղծությունների մեջ են»: Նույնը, իհարկե, այլ սկզբունքներով ու առանձնահատկությամբ առկա է նաև արձակում ու թատերգության մեջ: Հայտնի է Գաբրիել Սունդուկյանի խոստովանությունը: 1898 թվականի սեպտեմբերի 30–ին Յուրի Վեսելովսկուն հասցեագրած նամակում նա շեշտված նշում է.

«Խաթաբալայի» Մասիսյանցը – ես եմ, «Էլի մեկ զոհի» Միքայել – ես եմ: Պեպոն — դարձյալ ես եմ հասարակ կինտոյի կերպարով: Այս վերջին հանգամանքը մասամբ երևում է նա «Պեպոյի» հառաջաբանից: Շատ կծու արտահայտություններ, որ Պեպոն ասում է Զիմզիմովին, հնարովի չեն, այլ ասել եմ ես իմ հակառակորդներին, իրականում վկաների ներկայությամբ, մինչև «Պեպոն» գրելը»: Հեղինակը, որպես գաղափարախոս, առավել ցայտուն ներկայություն՝ հատկապես գաղափարապաշտ գրողների երկերում: Այս տեսակետից ա ռանձնանում են Ռաֆֆու ծրագրային վեպերն ու պատմավեպերը՝ «Ջալալեդդին», «Կայծեր», «Խենթը», «Սամվել», «Դավիթ բեկ», «Պարույր Հայկազն»: Հեղինակային սկզբունքների ընդգծված արտահայտությամբ առանձնանում են նաև Մուրացանի գյուղը պատկերող և պատմության նյութով գրված երկերը՝ «Խորհրդավոր միանձնուհի», «Գևորգ Մարզպետունի», «Ռուզան», «Անդրեաս երեց»: Գաղափարապաշտ լինելով հանդերձ՝ Մուրացանը նաև միտումնավոր գրող էր, այսինքն՝ հերոսներին դարձնում էր իր գաղափարական սկզբունքների արտահայտիչը: Այնպես որ, գրողի կենսագրության ուսուցումը ոչ թե սոսկ թվերի ու փաստերի թվարկում է, այլև նրա գաղափարագեղագիտական ըմռնումների համակարգ: Դա անչափ կարևոր է ոչ միայն գրական որևէ երկ, այլև տվյալ գրողի ամբողջ ստեղծագործությունը բնութագրելու համար:

Գրողի կենսագրության և կենսագրական ազդակներ ունեցող երկերի մեկնաբանության համար շատ կարևոր է նրա մարդկային նկարագրի, խառնվածքի ու հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը: Դա շատ բանով կարող է նպաստել նրա խոսքի ներքին լիցքի, ընդհանուր ստեղծագործական շնչի ճիշտ զգացողությանը: Այս հարցում ուսուցչին շատ բանով կտան ժամանակակիցների հուշերը:

Թումանյանի, Միսաք Մեծարենցի Դանիել Վարուժանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի մասին, մամուլում կամ առանձին հուշագիրների գրքերում տեղ են գտել հուշեր նաև Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի և այլոց մասին: Հուշերը հավաստի ու կենդանի պատկերացում են տալիս գրողի ծննդավայրի, ծնողների ու հարազատների, մանկության ու հասունության տարիների, մարդկային փոխհարաբերությունների, կապերի, հակումների, հափշտակությունների, նաև՝ ուսումնառության, ստեղծագործական մտահղացումների և շատ ու շատ այլ բաների մասին: Այդ հուշերից ընթերցողի առջև հառնում է կենդանի, իրական մարդը՝ որոշակի նկարագրով, պահվածքով, բնավորությամբ ու հոգեբանությամբ: Ահա Եղիշե Չարենցը: Ինչպես իր ստեղծագործությամբ, այնպես էլ հուշագիրների վկայությամբ ակնհայտ է դառնում, որ կյանքում նա եղել է շատ եռանդուն, շարժուն, ոգևորվող, արագ լարվածության հասնող, արագ էլ հիասթափվող, ներքուստ հոգեբանական կտրուկ անցումներ ունեցող անձնավորություն: Նրան՝ հարազատ է եղել պահվածքի անկաշկանդությունը, ազատ տարերքը, շփումների ու վերաբերմունքի անմիջականությունը: Մարդ Չարենցը և բանաստեղծ Չարենցը նույնն են: Նրա մարդկային ու գրական կերպարը բացառիկ միասնության արտահայտություն են: Եվ դա այն աստիճանի, որ իր կյանքը նա դարձրեց ժամանակի հոգևոր պատմությունն անմնացորդ պատմեց իր մասին: Մարտիրոս Սարյանի բնութագրմամբ Չարենցն օժտված էր, ստեղծագործական ծայրահեղ լարման հասնելու աներևակայելի ուժով: Նա ոգևորվում էր ինքնամոռացության աստիճանի և հուսահատվում հասնելով խոր հիասթափության: Այդ ուժը նրան մղում է բառացիորեն մեկ գիշերվա կամ մեկ–երկու օրվա ընթացքում գրելու ռադիոպոեմները, «Ասպետական» ռապսոդիան, «Մաճկալ Սաքոյի պատմությունը», «Ստամբուլը»: Վեց ամսում նա ստեղծեց «Գիրք ճանապարհի» ժողովածուն՝ տասը պոեմ, առանձին շարքեր: Գրազի համար մեկ գիշերվա ընթացքում գրեց խոստացած հարյուր քառյակից վաթսունհինգը, հաջորդ օրը վկաների ներկայությամբ կարդաց նրան՝ ում խոստացել էր, ապա պատռեց ու դեն նետեց՝ ասելով, թե հիմա ուրիշ բան պիտի գրել: Նույն զգացողությամբ այրել է հիսուն գազել, թողել միայն մեկը, մի եզակի գլուխգործոց՝ գրված մոր համար: Ծայրահեղ լարումը նրան կարող էր հասցնել հզոր թռիչքների, երբեմն՝ նաև անկումների պատճառ դառնալ, հզոր ուժերի խտացում կար նրա մեջ, որ հորդում էր հեղեղի պես: Բայց դարձյալ դժգոհ էր իրենից. «Իմ ապրումների տասը տոկոսը՝ չեմ կարողանում արտահայտել»:

Այսպես ժամանակի զգայաչափը դարձած մարդ անհատի կենսագրությունը դառնում է ժամանակի որքան գեղարվեստական, նույնքան էլ՝ ճշմարիտ ու հավաստի պատմություն: Գրողի կենսագրության ուսուցմանը կարող են նպաստել ինքնակենսագրական բնույթի գեղարվեստական ստեղծագործությունները, անցյալի անդրադարձները խտացնող հուշագրությունները, նրանց օրագրությունները, նամակագրական ժառանգությունը, նոթագրությունները և այլն: Հայ գրականությունը հարուստ է ինքնակենսագրական վեպերով, վիպակ ներով ու չափածո ստեղծագործություններով: Հայտնի են Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել», Գուրգեն Մահարու «Մանկություն», «Պատանեկություն», «Երիրասարդության սեմին», «Ծաղկած փշալարեր», Վահան Թոթիվենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», Նաիրի Զարյանի «Երկրորդ կյանք» վեպերն ու վիպակները, Եղիշե Չարենցի «Չարենց նամե» պոեմը: Հուշագրություններից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Պերճ Պռոշյանի «Հուշիկները», Շիրվանզադեի «Կյանքի բովիցը», Գուրգեն Մահարու հիշողությունները Չարենցի, Բակունցի և այլոց մասին: Օրագրային նշումներից ու նոթագրություններից կարելի է առանձնացնել Ավետիք Իսահակյանի գրառումները, որոնք լույս տեսան «Հիշատակարան» վերնագրով, Չարենցի և այլոց օրագրերը: Ինքնակենսագրական բնույթի երկերը գրողների կենսագրության մասին արտակարգ հարուստ նյութ են պարունակում: Դրանց արժեքն այն է, որ անհատական կյանքը դիտվում է ազգային ու հանրային կյանքի շրջանակի մեջ, մարդը, նրա ձևավորումն ու զարգացումը երևում է իր ժամանակի համապատկերով: Օրինակ, Մահարու արձակ երկերի նշված շարքը նրա կյանքի պատմությունն է՝ սկսած մանկական տպավորություններից մինչև առաջին աքսորը ներառյալ: Անձնական, ընտանեկան կյանքի պատմություն լինելով՝ այն նաև հանրային, ազգային, գրական–մշակութային, երկրի քաղաքական կյանքի պատմություն է: Մահարին ելնում է նաև իր գրական նախասիրություններով, գրական առաջին ծանոթություններով, խմբագրություններ կատարած այցելություններով, առաջին տպագիր բանաստեղծության խանդավառությամբ և այն ամենով, ինչն ստեղծեց նրա գրական միջավայրն ու հասունացումը: Գրեթե նույնն են նաև մյուս հեղինակների երկերը: Ուստի՝ այս բնույթի ստեղծագործությունները միանգամից ծառայում են երկու նպատակի. նախ՝ նպաստում են գրողի կենսագրության ուսուցմանը, այնուհետև՝ ներկայացնում ժամանակը:

Իսկ առանց ժամանակի իմացության գրողի անհատական կյանքը զրկվում է այնքան անհրաժեշտ տեսադաշտից:

Գրողի ստեղծագործական կենսագրությունը հատկապես ցայտուն է արտահայտվում օրագրությունների և նոթագրությունների մեջ: Այսպես, Ավետիք Իսահակյանի «Հիշարակարանն», ըստ էության, նրա հոգևոր կյանքի պատմությունն է, նրա ապրումների աշխարհը: Ահա դարասկզբի արյունալի եղեռնից ստացած լուրերի հոգեբանական ներգործությունը. «Իմ հայրենիքը– ավեր, արյուն, նախճիր, որբեր, հրդեհ, ավեր... Փախուստ, գաղթ, ավերում են քաղաքներ, դպրոցներ, վանքեր, վառում են գրադարաններ, մատյաններ, մանուկների արյան բաղանիք, գերեվարում են մի ժողովուրդ. ավեր է: ... Ա՜խ, ես էլ լինեի քեզ հետ, իմ խե՛ղճ, ջարդվա՛ծ, ճղակոտոր, որբ և այրի՛ ժողովուրդ… Լինեի քեզ հետ, լայի քեզ հետ»: Այս գրառումներն արված են 1915–1916 թվականներին: Իսկ 1919–ի հունվարի 23–ին Ժնևում արած գրառումը՝ «Կտրեցե՛ք, կտրեցե՛ք թռչունների լեզուները, որոնք հանդգնում են գարնանը երգել մեր մորթած մանուկների անթաղ, ցիր ու ցան ոսկորների վրա, որոնց ծածկել են անգութ, անզգա, անտարբեր, սինլքոր ծաղիկները»,— հիմք է դարձել նույն ամսի 29–ին գրած «Ահա նորեն գարուն եկավ» բանաստեղծության համար: Ահա և այդ բանաստեղծությունը՝ ցույց տալու ինքնաբուխ ապրումի և դրա գեղարվեստական վերարտադրման կենսագրական և ստեղծագործական միասնությունը.

Գրողի կենսագրական նրբերանգներին հասուն լինելուն հատկապես շատ են օգնում նամակները: Նամակների մեջ գրողի ներքին կյանքը երևում է անաղարտ մերկությամբ, ասես ափի մեջ տրոփում է նրա հոգին: Առանց նամակների մեջ պահպանված անկեղծ խոստովանությունների՝ շատ կողմերով թերի ու պակասավոր կլինեին գրողների մասին մեր ունեցած պատկերացումները: Այս տեսակետից անուրանալի արժեք ունեն Աբովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Ռաֆֆու, Պարոնյանի, Թումանյանի, Վարուժանի, Տերյանի, Չարենցի և մյուս հայ գրողների նամակները: Զարմանալի մի մտայնություն է իշխում ընթերցողների մեջ: Նրանք այնքան էլ սիրով չեն գնում գրողների երկերի բազմահատոր ժողովածուների վերջին հատորները, որովհետև դրանք պարունակում են ոչ թե նրանց գեղարվեստական երկերը, այլ՝ հոդվածներն ու նամակները: Մինչդեռ պետք է վարվել ճիշտ հակառակը, որովհետև գրողն սկսվում է իր նամակներից ու ծրագրային հոդվածներից, որոնց իմացությունից հետո միայն հնարավոր կլինի ըստ ամենայնի ամբողջական ու ճիշտ ընկալել նաև նրանց գեղարվեստական ժառանգությունը: Գրողի կենսագրության ուսուցման

կապակցությամբ նամակները տալիս են մի քանի հարցերի պատասխաններ. ինչպիսի՞ն են նրանք եղել կյանքում, համապատասխանո՞ւմ են նրանց իրական ու գրական կերպարները, անկեղծության և դիմացինին վստահելու ի՞նչ չափ է բնորոշում նրանց, լեզվի և մտածողության ի՞նչ ընդհանրություններ ունեն նրանց խոսքի դրսևորումները նամակների և գեղարվեստական գրականության մեջ։

Գրողի մարդկային բարոյականությունը նաև նրա ստեղծագործության գնահատության չափանիշ է, ուստի՝ կենսագրություն ուսուցանելիս այս կողմին պետք է առանձնահատուկ ուշադրություն նվիրել։ Իմացականությունից բացի՝ այն ունի նաև դաստիարակչական մեծ նշանակություն։ Նաև այս դեպքում է, որ աշակերտն իր համար կարող է ընտրել բարոյական իդեալ։ Այս ամենով հանդերձ, կան նաև գրողների կենսագրությունների ուսուցման պարզ միջոցներ։ Նախ, այդ նպատակին կարող են ծառայել իրենց իսկ՝. գրողների ձեռքով շարադրված կենսագրությունները։ Այդպիսիք թողել են Պերճ Պռոշյանը, Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին, Պարույր Սևակը և ուրիշներ։ Ինքնակենսագրությունները միշտ ավելի հավաստի են և ավելի տպավորվող։ Օրինակ, Գուրգեն Մահարու կենսագրությունը կարելի է անցնել նրա երկերի հինգհատորյա ժողովածուի առաջին հատորը բացող «Ինքնակենսագրությամբ»։ Ինչպես ուսուցչին, այնպես էլ աշակերտին շատ բան կարող է տալ Պարույր Սևակի «Անցյալը ներկայացած» ինքնակեսագրական պատումը։ Այսպես նաև մյուս նյութերը, որոնք ուսուցիչը պետք է ունենա իր գրադարանում։

Շատ կարևոր է գրողների կենսագրության ուսուցումը նաև նրանց լուսանկարներով։ Նկարներով կենսագրության ուսուցումը ոչ միայն ցուցադրական նյութով կարող է տպավորվել աշակերտի մեջ, այլև բացահայտել գրողի և նրա շրջապատի, գրողի տարբեր տարիների արտաքին և հոգեբանական կերտվածքի առանձնահատկությունները։ Այսպես, մի ամբողջ պատմություն է կապված Թումանյանի «Վերնատան» հայտնի լուսանկարի հետ։ Առանձին մի հուզմունքով կարելի է խոսել 1915 թվականին Էջմիածնի որբերի հետ Թումանյանի լուսանկարի մասին։ Սպիտակ արխալուղը հագին կանգնած է ազգի ցավից ժամանակից շուտ ծերացած հայոց բանաստեղծը, անսահման տխուր են նաև նրան շրջապատած որբերի հայացքները։ Այդպես էր և այդպես էլ պիտի լիներ։ Լուսանկարն արտացոլում է այդ օրերի նրա ծանրածանր ապրումները, այն օրերի, երբ մեկը մյուսի ետևից պիտի գրեր իր հայտնի հայրենասիրական բանաստեղծությունները և մեկ տարի անց՝ 1916–

ին հրատարակեր «Հայրենիքիս հետ» շատ խորհրդանշական վերնագրով: Կենսագրական հարուստ շերտեր բացահայտող լուսանկարներ ունեն նաև մյուս հայ գրողները՝ Իսահակյանը, Ահարոնյանը, Շանթը, Չարենցը, Համաստեղը, Բակունցը, Մահարին, Շիրազը, Սևակը, Վիլյամ Սարոյանը և այլոք: Այս առիթով աշակերտներին պիտի ասել, որ Մաշտոցի, Խորենացու, Սայաթ–Նովայի և միջնադարյան գրականությունից ծանոթ շատ հեղինակների պատկերները ոչ թե բնօրինակներ են, այլ ստեղծվել են հետագա շրջանի նկարիչների կողմից: Ուշագրավ պատմություններ են կապված նաև Խաչատուր Աբովյանի ու Պետրոս Դուրյանի նկարների հետ, որոնց մասին ևս աշակերտը պետք է ունենա բավարար գիտելիքներ: Դժբախտաբար, մեր գրահրատարակիչները չունեն գրողների նկարներն ու խմբանկարներն առանձին հավաքածուով, ճշգրիտ տեղի ու տարեթվերի նշումով տպագրելու ճաշակ: Այդ իսկ պատճառով բացը պետք է լրացնի ուսուցիչը: Իր գրադարանում առանձին թղթապանակների կամ ծրարների մեջ տարիների ընթացքում պիտի հավաքի համապատասխան նյութեր, որոնք նա կարող է ձեռք բերել մամուլից ու առանձին հրատարակություններից:

Կենսագրական ուշագրավ մանրամասներ են կապված գրողների կեղծանունների հետ: Կեղծանուններից պետք է տարբերակել գրողների գրական անունները, ինչպես Շիրվանզադե, Սիամանթո, Դանիել Վարուժան, Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Ազատ Վշտունի, Վահրամ Ալազան, Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ և այլն: Դրանց հետ կապված են որոշակի պատմություններ, որոնք իմանալու և վերարտադրելու դեպքում ուսուցիչը գրողի կենսագրության ուսուցումը կարող է դարձնել ավելի կենդանի ու հետաքրքիր:

Հայտնի է ասույթի վերածված խոսքը՝ գրողին ճանաչելու համար պետք է լինել նրա ծննդավայրում: Իրոք որ, դա այդպես է: Դժբախտաբար, պատմական հանգամանքների բերումով մենք այսօր չենք կարող գնալ մեր գրողներից շատերի ծննդավայրերը, որովհետև այդ տարածքները բռնագրավված են դարավոր ոսոխի կողմից: Պատմական Հայաստանի ինչպիսի՜ վայրեր՝ Վասպուրական, Սասուն, Կարին, Խարբերդ, Սեբաստիա, Բիթլիս, նաև՝ Կարս, նաև՝ Սալմաստ ու Խոյ… Եթե անգամ որպես զբոսաշրջիկ մի կերպ թափանցենք այդ վայրերը, ապա դժվար թե գտնենք մեր գրողների ծննդավայրն ու հայրենի տունը: Այդ պայմաններում նաև դժվար է զգալ գրողին, որովհետև փոխվել են մթնոլորտն ու շունչը: Դե արի ու այսօրվա Վանում գտիր Նարեկացու, Քուչակի և մյուս արժանավոր

վասպուրականցիների շունչն ու ոգին, թեն ինչ–ինչ հիշատակներ դեռևս պահպանվել են: Կարսը կարող է մեզ ներկայանալ Չարենցի նկարագրած զարմանահրաշ շինություններով՝ Առաքելոց եկեղեցով, Վարդանի կամուրջով, բայց այլևս չկա նրա հերոսների միջավայրն ու մթնոլորտը: Այդուհանդերձ, ինչ որ պահպանվել է, մշտապես թանկ ու հարազատ է մեզ համար և այդ հիշատակները այնքան պիտի փայփայենք, մինչև բացվեն ավետյաց երկրի ճանապարհները: Իսկ կան ճանապարհներ, որոնք բաց են մեր առջև և ուր կարող ենք գնալ՝ հաղորդակցվելու Թումանյանի, Տերյանի, Բակունցի, Սահյանի բնաշխարհիկ ոգուն ու ստեղծագործական ծագումնաբանությանը: Չլինել Լոռիում, չլինել Ջավախքում՝ նշանակում է, իրոք, լիարժեք չհասկանալ Թումանյան ու Տերյան, նշանակում է անհաղորդ մնալ բնության պատկերներին ու մարդկային նկարագրերին, որոնց «բնօրինակներն» առ այսօր պահպանվել են նրանց կողմերում: Թումանյանի բնության պատկերներն այնքան առարկայական են, որ կարելի է անգամ տեսնել նրա նկարագրություններից շատերի գիծը, գույնը, դրվածքը, հարաբերակցությունը: Նույնիսկ հնարավոր է որսալ շատ վերացական թվացող տերյանական պատկերների նախահիմքը: Օրինակ, նա ունի այսպիսի մի պատկեր. «Կապույտ երեկոն զարկել է վրան»: Այս վերացարկումը շատ տեսանելի ու առարկայական հիմք ունի բանաստեղծի բնաշխարհում: Ճանապարհով անցնելիս, իրոք, իրիկվա մթնշաղի մեջ Ջավախքի սարերն ու բլուրներն ասես տարածության մեջ խփված վրաններ լինեն: Լուսանկարչական ճշգրտությամբ անգամ կարծես կապույտ երեկոն զարկել է վրան. Կամ՝ անհնար է թափանցել Բակունցի պատմվածքների գեղարվեստական աշխարհը, առանց լինելու Գորիսում, նաև՝ հաղորդակցվելու Սահյանի պոեզիային, առանց տեսնելու Սիսիանը, իսկ երկուսի համար էլ, ընդհանրության մեջ, Սյունիք–Զանգեզուրը: Այստեղ են նրանց հերոսները, նրանց հերոսների բնավորությունները, նրանց հոգեբանական կերտվածքը, նրանց բնաշխարհը Միաժամանակ՝ գրողների ծննդավայրին ու հայրենի բնաշխարհին հաղորդակցվելը տեսանելի ու առարկայական է դարձնում շատ տեղանուններ ու վայրեր: Օրինակ, Բակունցի նկարագրած Կյորեսը կամ Հին Շենը, որը ներկայիս Գորիսի կողքին է, մյուս բնակավայրերը, Մթնաձորը, Լոռու ձորը, Ջավախքը՝ իր բարձրագահ Աբուլով ու Մթին սարերով: Իսկ Համո Սահյանի պոեզիան լի է աշխարհագրական վայրերի անուններով, որոնք փռված են իր հայրենի ե զերքում՝ Որոտան, Որոտնավանք, Ծիծեռնավանք, Գյազբել սար, Զորզորա գետ և այլն…

Գրողի կենսագրությունն ուսումնասիրելիս շատ լավ կլինի, որ ուսուցիչը կազմակերպի զբոսարշավ դեպի նրա ծննդավայրը։ Իսկ եթե դա հեռավրության կամ այլ պատճառաբանությամբ հնարավոր չէ, կարելի է այցելել գրողների տուն–թանգարանները։ Երևանում կարելի է այցելել Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Եղիշե Չարենցի, Գյումրիում՝ Հովհաննես Շիրազի, Դսեղում՝ Հովհաննես Թումանյանի, Գանձայում՝ Վահան Տերյանի, Գորիսում՝ Ակսել Բակունցի տուն–թանգարանները։ Ընդհանրապես, հնարավորության դեպքում կարելի է կազմակերպել ճամփորդություններ գրական վայրերով։ Հայաստանի սահմաններից դուրս՝ լինել նաև Թիֆլիսում, հնարավորության դեպքում՝ Կ. Պոլսում, Վենետիկի սուրբ Ղազար կղզում, Նոր Նախիջևանում (Դոնի Ռոստով), Տարտուում (Դորպատ), Մոսկվայում, Պետերբուրգում, անգամ՝ Կալկաթայում ու Մադրասում և այլուր։ Հայ գրականության քարտեզը շատ ընդգրկուն է և մեծ բավականություն կարող է պատճառել գրողի կյանքի հետքերով գնացող ճամփորդության սիրահարներին։

Պարույր Սևակի կենսագրության ուսուցում

Դասի նպատակը՝

- ճանաչել տալ Պ.Սևակի կենսագրության հիմնական դրվագները,
- ընկալել տալ Պ.Սևակի ստեղծագործության հիմնական դրվագնեը,
- ծանոթացնել Պ.Սևակի թողած գրական ժառանգությանը:

Վերջնարդյունքը՝

- ներկայացնել Պ.Սևակի կենսագրության հիմնական դրվագները,
- զուգահեռներ անցկացնել Սևակի ծննդավայրի թողած ազդեցության և ստեղծագործութայն միջև,
- ներկայացնել Սևակի ժողովածուները և բանաստեղծական շարքերը:

Դասը սկսում ենք Պարույր Սևակին նվիրված խոսքերով.

..Ինչպե՞ս կարելի է Պարույր Սեվակի գերեզմանի առաջ չհավատալ հոգու անմահությանը… ____…Պարույր Սեվակի ծնունդը՝ մեր կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի «Եղիցի լույս»... ____...Պարույր Սեվակն այնպիսիններից եղավ , որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահներից մեկն է աշխարհում... ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Դու ընդամենն անհնար էիր, բայց ինչպիսի՛ անհնար: Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում, ու բնության ուժն է բերում ժողովրդին: Եվ սիրում էինք քեզ, որովհետև չէինք կարող բնությանը չսիրել...

____Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջոցով երգեր իր ցավն ու ուրախությունը: Այդպիսի անհատներ ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանից: ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Նա կյանքից մի բան էր պահանջում: Պահանջում էր, որ ամեն ինչ լինի միանգամից: Եվ միանգամից եղավ: Բանաստեղծ դարձավ միանգամից, ճանաչվեց միանգամից, բոլոր կոչումներն ու դափնիներն ստացավ միանգամից: Այնքան դանդաղ, դժվարությամբ շինած իր տունն էլ քանդեց միանգամից: Մեր նորագույն բանաստեղծության մայր գերանն էլ կոտրվեց միանգամից, ու մայր սյունն էլ ծալվեց միանգամից...

_____Մեր սերնդի բանաստեղծների մեջ ամենից կրտսերն էր նա, բայց ավագագույնն էր վաստակի ու հանճարի առումով: ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Քննարկելուց հետո սովորողները հետաքրքրությամբ լցված կարդում են կենսագրությունը:

Սա օգնում է աշակերտներին դասի ուսուցման հետագա փուլերում ակտիվ մասնակցության համար:Կարդալուց հետո յուրաքանչյուր աշակերտ կազմում է անհատական աղյուսակ ՝ իր իմացածը դասդասելու համար:

V-գիտեմ

- -իմ իմացածին հակասում է

+-նոր տեղեկություն է

?-անհասկանալի է,շփոթեցնող

!- հետաքրքիր է,կարելի է քննարկել

v	-	+	?	!

Դասի յուրացումն ավարտելուց հետո պարզաբանվում են« անհասկանալի է,շփոթեցնող կամ հետաքրքիր է, կարելի է քննարկել »նշումները:Այնուհետև աշակերտներին հանձնարարվում է կենսագրությունից առանձնացնել

- ✓ 3 հետաքրքիր դեպք,
- ✓ 2 ուրախ փաստ,
- ✓ 5 կարևոր փաստ:

Աշակերտները այս առաջադրանքը կարող են կատարել m-աձև աղյուսակի միջոցով:

3 հետաքրքիր դեպք	2 ուրախ փաստ	5 կարևոր դեպք

Այնուհետև խոսում ենք Սևակի ժողովածուների մասին.աշակերտն արդեն են ծանոթ է ,թե ինչ է բանաստեղծական շարքը և ժոցովածուն,ուստի ուսուցիչը մտագրոհի միջոցով հիշեցնում է և թվարկում է Սևակի ստեղծագործությունները՝

«Անմահները հրամայում են»	1948թ.
«Անհաշտ մտերմություն»	1959թ.
«Սիրո ճանապարհ»	1954թ.
«Նորից քեզ հետ»	1957թ.
«Անլռելի Զանգակատուն»	1959թ.
«Մարդը ափի մեջ»	1963թ.
«Եղիցի լուս»	1969թ.

Վերջում բազմանիստով ամփոփում ենք դասը.



պոետ

Բազմանիստի կառուցումից հետո բացատրվում են անհասկանալի հարցերը,եթե կան ,և հանձնարարվում է տնային աշխատանք՝ կենսագրական աղյուսակ և «Հարցազրուց Սևակի հետ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրողի կենսագրության ուսումնասիրությունը ամենակարևոր բանալին է նրա ստեղծագործությունները հասկանալու և լիարժեք ըմբռնելու համար: Այդ պատճառով պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կենսագրության ուսուցմանը:

Կարևոր են՝

- Գրողի ապրած ժամանակաշրջանը,
- Գրողի մասին մտերիմ մարդկանց կարծիքները,
- Հուշագրությունները,
- Օրագրությունները,
- Նամակները,
- Կեղծանունները,
- Գրողի ծննդավայրը,
- Ինքնակենսագրական ստեղծագործությունները,
- Լուսանկարները և այլն:

Եվ այս ամենի շարունակական ուսումնասիրությունը կօգնի բազմակողմանիորեն ճանաչել գրողին և հասկանալ նրա ստեղծագործությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://sevakparuyr.do.am/publ/haytni_mardik_sevaki_masin
2. Դավիթ Գասպարյան «Պարույր Սևակ.կյանքը և ստեղծագործությունը»